Ութանմազլար, հայիֆ սէնի:

ԺԷ դարի կէսերից նկատւում է անդադրում պայքար ծխելու եւ ծխախոտամոլութեան դէմ: Այդ պայքարի առաջամարտիկ է դիտւում դարի հայ իրականութեան նշանաւոր դէմքերից մէկը՝ Յովհաննէս Թութունջին, յայտնի էր որպէս Պոլսի Պատրիարք եւ Աղթամարի Կաթողիկոս, որին է վերագրւում նաեւ Կապոյտ Նեղոսի ակունքների յայտնաբերումը:

Յովհաննէս Թութունջում գրած «Վասն թութունի» տաղը լայն արձագանք գտաւ 17-րդ դարի հայ իրականութեան մէջ.

Թէ հարցանեմք ի սուրբ գրոյն,
Գարշ եւ զազիր ասէ զթութուն,
Որպէս մեղուն փախչի ծխոյն,
Նոյնպէս հրեշտակն յայն պիղծ հոտոյն:

Հեղինակը համոզված է, որ թութունին վարժուած անձնաւորութիւնը հոգով ու մարմնով հիւանդ է եւ «Ձեռօքն աւեր առնէ զիւր տուն»: Նա խօսում է այս հրեշաւոր սովորութիւնից մարդկանց կախուածութեան մասին, անդրադառնալով այն հանգամանքին, որ.

Շատ մարդ շիւար կան 'ւ երերուն,
Ոչինչ ունին ի տան յանկիւն,
Փող մի չունին, որ տան հոգոյն,
Երթան պարտօք գնեն զթութուն...

Շատերը, նոյնիսկ իրենց ունեցուածքն են վաճառում, «Ձապրանքն կեր կու տայ հրոյն, գողնայ ի տանէն եւ գնէ թութուն»:

Խօսում է նաեւ մոլի ծխողների մասին, որոնք «որպէս զորդ անքուն, զտիւ եւ զգիշեր 'առաւօտուն, ոչ դադարին, խմեն զթութուն»: Դատապարտելով նրանց գործունէութիւնը, համեմատելով այն ամենածանր հանցագործութեան հետ (Երթայ խմէ հետ շներուն) հեղինակը համոզուած է, որ ծխելը սատանայավայել արարք է.